# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

գ. Շիրակամուտ

N° Ե -03/114

«22» 11. 2016թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ներկայացնում ենք Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 34-Ն, 35-Ա, և 36-Ա որոշումները:

Առդիր 3 էջ:

Համայնքի ղեկավար Ս.Մազմանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

# ՈՐՈՇՈՒՄ

,, 17 " նոյեմբերի 2016թվականի N 34-Ն

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՊԱԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, և հաշվի առնելով Շիրակամուտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

Որոշում է

Շիրակամուտ համայնքի հողի հարկերի իրատեսականը կատարելու համար 2016 թվականի բյուջեի գումարներից պակասեցնել 1040,0 հազար դրամ, քանի որ համայնքի բնակիչների մեծամասնությունը մշտապես բնակվում են ՌԴ-ում և հողի հարկերը հավաքել հնարավոր չէ:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/4/ | դեմ /0/ | ձեռնպահ/0/ |
|---|---|---|---|
| Մ. Նալբանդյան | [signature] | | |
| Ա.Պապոյան | [signature] | | |
| Ս.Պապոյան | [signature] | | |
| Հ.Նալբանդյան | [signature] | | |
| | | | |

Համայնքի ղեկավար [signature] Ս.Մուզմանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

# ՈՐՈՇՈՒՄ

,, 17 " նոյեմբերի 2016թվականի N 35-Ա

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ գյուղական համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի վարչական տարածքում գտնվող, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող, 06-087-0175-0004 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.0175 հա և 06-087-0179-0018 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.01 հա գյուղատնտեսական այլ հողատեսքեր էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբեկտների նպատակային, կոմունալ ենթակառուցվածքների օբեկտների հողերի գործառնական նշանակության փոփոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ// | դեմ /0/ | ձեռնպահ/0/ |
|---|---|---|---|
| Մ. Նալբանդյան | [signature] | | |
| Ա.Պապոյան | [signature] | | |
| Ս. Կ.Պապոյան | [signature] | | |
| Հ.Նալբանդյան | [signature] | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] Ս.Մազմանյան

[stamp]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ.Շիրակամուտ
հեռ. 6-15-01

# Ո Ր Ո Շ Ու Մ

,,17 '' նոյեմբերի 2016 թվականի N 36-Ա

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ և ՆՐԱ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ 2016Թ.ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ''Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի դրույթներով, Շիրակամուտ համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել Շիրակամուտի գյուղապետարանի և նրա ենթակառույցների ` Երաժշտական դպրոցի և <<Արևիկ>> մանկապարտեզի 2016թ.նոյեմբերի 2-ից մինչև նոյեմբերի 17-ը ընկած ժամանակահատվածում հաշվառված գույքի ապրանքանյութական արժեքների գույքագրման ցուցակները:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ// | դեմ /0/ | ձեռնպահ/0/ |
|---|---|---|---|
| Մ. Նալբանդյան | | | |
| Ա.Պապոյան | | | |
| Ս. Կ.Պապոյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար Ս.Մազմանյան